Արձանագրություն N 3

«ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/7» ծածկագրով գնանշման հարցման միջոցով

գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի հայտերի գնահատման նիստից

Պատվիրատուի հասցեն՝ ք. Երևան, Միծեռնակաբերդի զբոսայգի 1 «03» «ապրիլ» 2018թ.

ժ 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Աբրահամյան

Հանձնաժողովի անդամներ՝

Սեյրան Զորողլյան- պահեստապետ

Ցոլակ Սարգսյան- սպասարկման ծառայության պետ

Արթուր Գասպարյան- տնօրենի օգնական

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան

I. **Գնանշման հարցման միջոցով ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին**

Համաձայն ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 46-րդ կետի հրավիրվել է հայտերի գնահատման նիստ, որի ընթացքում արձանագրվել է, որ.

1.1 Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի, ինչպես նաև բավարարում է հրավերի 2.4 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերվող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջներին:

Մասնակիցների կողմից ներկայացված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին: «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում բացակայում էր հավելված N 3-ը՝ հայտարարություն որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին: Համաձայն ՀՀ կառավարության 04 մայիս 2017 թվականի 526-Ն որոշման 41-րդ կետի՝ գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային եղանակով տեղեկացրել է «Էքսպրես Շին» ՍՊԸ-ին, մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ահմապատասխանությունը, ինչ չի շտկվել ՍՊԸ-ի կողմից, որի հետևանքով համաձայն 526-Ն որոշման 42-րդ կետի հայտը համարվել է անբավարար և մերժվել է:

II. **Գնանշման հարցման միջոցով ԿԴՄՀՀ-ԳՀԱՊՁԲ-18/7 ծածկագրով գնանշման հարցման մրցույթի գնահատման արդյունքների հաստատման և ամփոփման մասին**

2.1 Հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել

Թիվ 1,6 չափաբաժինների մասով «Էկոմիքս» ՍՊԸ-ին, թիվ 2,4,5,7,8,9 չափաբաժինների համար «Էլեկտրիկա Գռուպ» ՍՊԸ-ին, թիվ 3 չափաբաժնի համար «Արգոհշին» ՍՊԸ-ին:

Ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը, որը ըստ նույն հոդվածի 3-րդ կետի տվյալ գնման ընթացակարգի

համար առնվազն 5 օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել, ում հետ կնքվում է պայմանագիր:

2.2 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն հայտերի գնահատման նիստին հաջորդող աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակել տեղեկագրում:

2.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, պայմանագիր կնքելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում կազմել գնման ընթացակարգի արձանագրություն:

Հանձնաժողովի նախագահ՝ Արման Աբրահամյան

Հանձնաժողովի անդամներ՝

Սեյրան Զորողլյան- պահեստապետ

Ցոլակ Սարգսյան- սպասարկման ծառայության պետ

Արթուր Գասպարյան- տնօրենի օգնական

Հանձնաժողովի քարտուղար՝ Օլգա Սահակյան